

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի գնահատման չափանիշներ

XI դասարան

1. Հարց- 1-ին ենթահարց՝ 2մ. , 2-րդ ենթահարց՝ 2մ. :
2. Հարց- 1-ին ենթահարց՝ 0,5մ., 2-րդ ենթահարց՝ 1մ., 3-րդ ենթահարց՝ 2,5մ.:
3. Հարց- 1-ին ենթահարց՝ 0,5մ., 2-րդ ենթահարց՝ 1մ., 3-րդ ենթահարց՝ 2,5մ.:
4. Հարց- 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ ենթահարց՝ 1մ, 3-րդ ենթահարց՝ 2մ.:
5. Հարց- 4 միավոր:

Յ.Գ. Կարևորել հարուստ բառապաշարը, յուրօրինակ վերլուծությունները, ուշադրություն դարձնել ոճական սխալներին՝ յուրաքանչյուրի համար հանելով 0,25մ.: Ռեղադրական սխալներին անդրադառնալ՝ խմբավորելով:

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի պատասխաններ

XI դասարան

1. Արյուն է եղել աշխարհում:-Եղել է եղեռն ու կռիվ.
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին:
Մեծարենցը ապրել է ընդամենը 22 տարի. Երգել է կյանք, բնություն, սեր,
երգել է արև՝ խնդրելով շողալ ու պարուրել իր հիվանդ հոգին: Նա
գիշերերգության անզուգական երգիչ է՝ լցված աստղերի տխուր-պայծառ
առկայծումով: Բայց այս տիրության մեջ է խուժում արևի ճառագայթը:
«Արևին» բանաստեղծությունը Մեծարենցը համարել է «սանճարձակ
բանաստեղծություն». Նրա հիվանդ հոգին անսանձ ձգտում է դեպի արևը,
սրտագին կանչով աղերսում է շողալ՝ Հոգիս թռչնիկ մըն է՝ օդ ու լույսի, երգ ու
ծիծաղի կարոտ.....Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվանդ եմ:
Կորստյան տագնապն ու ապրելու տենչը նրան տանում են դեպի Արևը, դեպի
կյանք, որպեսզի գտնի այն ծաղիկը, որի անունն է ուզում իմանալ... Այս ցուրտ
կյանքում մեկնել են բոլոր նավակները՝ «Բաղձանքով ակաղձուն, Հեռացան
ամենն ալ՝ ծղփանուտ Երագիս ափունքեն, Անձուկին բոցը զիս պաշարե՛ց.
Ըսպասման հիվանդն եմ»: Եվ այս ցավը մեղմելու, գոնե մի քիչ էլ ապրելու
համար նա գնում է դեպի Արևը, որը վերջին հույսն է. նա ուզում է ձուլվել
արևի ճառագայթներին, կենդանություն ու շունչ ստանալ կյանքի այդ
աղբյուրից:

Այս արևի մասին է խոսում Չարենցը՝ հանճարեղ պատանու հոգու տենչանքը դարձնելով արևային ճանապարհ...

2.Տերյանը՝ մեր գրականության աշնան երգիչը, իր անդրանիկ ժողովածուն վերնագրել է « Մթնշաղի անտրջներ», որովհետև նրա խռովված հոգին կյանքում չէր գտնում որևէ հենարան, և մթնշաղի, անձրևի, մենակության մեջ էր որոնում իր երազը: Գալիս է Տխրությունը՝ գունատ աղջիկը, և քնքուշ մուրի թևով, անմարմին ու աննշմար պարուրում է բանաստեղծի ցաված հոգին: Բայց այս անհուն տխրության մեջ կա մի լուսավոր, գեղեցիկ ու ապրեցնող թախիծ, որը ծավալվելով դառնում է գարուն ու ծաղիկ, հեղեղների խոսուն հորձանք, ողջույն, որովհետև « ոսկեհանդերձ ու միզասքող աշնանը» միշտ էլ հաջորդում է զվարթորեն փթթուն գարունը և « քնքշաբույր ծաղիկները» ողողում են բանաստեղծի ցաված սիրտը սիրով ու ջերմությամբ:

Վահան՝ Տերյան, խնչպե՞ս երգեմ հիշատակը քո.
Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո:
Սրտիս վրա իջնի թող մի մուրթ մի ամպի քուլա,
Քամին բերե թող մահվան բոթ ու անձրևը լա:
Եվ թող թափվեն շուրջս աշնան տերևներ դեղին
Եվ զարդարեն, Վահան՝ Տերյան, քո անցած ուղին:
Ու մշուշում տխուր երգով բյուրավոր զանգեր
Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր:

Եվ երբե՛ք, երբեք չի աղոտի
Քո կանթեղը խավար մեր հոգում,
Քո կանթեղը - հեռո՛ւ կարոտի:

Մնացյալը՝ աշակերտը:

3.Հայտնի փաստ է, որ Չարենցը միշտ էլ եղել է « Ժամանակի շունչը», և նրա երգերը նաև երկրի տարեգրության արժեք ունեն:

« Մահվան տեսիլը» գրվել է 1920-ին, երբ Հայաստանը կանգնած էր կործանման եզրին, կուսակցությունները պառակտված էին, բանակ գրեթե չունեինք, թուրքը արդեն Ալեքսանդրապոլում էր, Արևմտյան Հայաստանն այլևս որբևայրի մոր նման սգում էր անթաղ դիակների ու այրված շեների վրա:

Այս ստեղծագործությունը Չարենցի այրող խոհերի, տազնապների, կորցրած հարազատ քաղաքի մորմոքն է: « Կապուտաչյա սիրուհին» այլևս դարձել է խոշտանգված, միակնանի, անճանաչելի մուրացիկ, և բանաստեղծը ուժասպառ հնչեցնում է ողբերի ու եղերերգությունների ամենավերջին ճիչը: Միակ հնարավորությունը իրեն հայրենիքի զոհասեղանին դնելն է, իրենով թշվառ հայրենիքը փրկելու վերջին ճիգը:

« Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան »:

Այդպես էր վարվել զորավար Մազմանյանը 1920-ին Կարսի անկման ժամանակ՝ զորքի առաջ ինքնասպանություն գործելով և դառնալով իր երկրի վերջին զոհը:

Չարենցն էլ նույնն է անում և որպես վերջին կամք ու հավատ ազդարարում.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,

Ոչ մի ստվեր կախադանին թող մոտ չգա...

Չարենցը դառնում է իր հայրենիքի խորհրդանիշը, ցանկանում է իրենով կասեցնել հարենիքի փլուզումը: Նա դառնում է մաքառող հայրենիքի խորհրդանիշը՝ « եղերական ու անբասիր» օրորվում է « երկնուշեղ կարոտի» կախադանին:

Այս ստեղծագործությունը ունի ոչ միայն պատմաքաղաքական , այլև անձնական ճակատագրի հավաստիություն:

4.....Եվ բառերի համար քո մարմարյա , հնամենի, բուրյան....

Այսպես է դիմել Չարենցը իր գրչակից բարեկամին, երբ նա « Այր էր մի անարատ», իսկ ինքը « ընկերն էր նրա բանաստեղծ»:

Այս « հնամենի , բուրյան» բառերով էլ Բակունցը հյուսել է մի գեղեցիկ, չբացահայտված ու չբարձրաձայնված սիրո պատմություն «Խոնարիւաղջիկը» պատմվածքում:

Պատմվածքը գրված է իրականության և հուշի խաչաձևումով. Հուշը գեղեցիկ է, հուզիչ՝ շաղախված կարոտի անմեկնելի գաղտնիքով. Ուսուցիչն ու աշակերտուհին միայն հայացքով են « գրուցում», չասված բառերի մեջ ծվարել է մի գեղեցիկ զգացմունք, որն այդպես էլ չի դառնում շոշափելի և իրական: Անցած տարիների գեղեցիկ հուշը և ներկա իրականության ողբերգությունը ցնցում են երբեմնի ուսուցչին: Խոնարիի հոգում է սիրո ապրումը, թեև ուսուցչի Էության մեջ է բռնկվում սերը:

Չկայացած մտերմության անամոք մի ցավ է, չկայացած տխուր սիրո պատմություն և...:

«Քաղհան անող կանանց մեջ տեսա Խոնարիին: Մեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ չտեսա» :Այն օրերի թաքուն ժպիտը մարել էր խորտակված երջանկության հետ:

Հարցերը աշակերտները պիտի գրեն:

5.Թումանյանի պալատի մեկ օրը աշակերտները պետք է ներկայացնեն: